



## Ա. ԱԱՀԱԿ

II.

Ս. Սահակը հայոց միծագործ կաթողիկոսներից  
մէկն է: Նա Ներսէս Մեծի որդին է, Լուսաւորչի թո-  
ռան ծոռը և Լուսաւորչի տան վերջին ժառանգը: Սա-  
հակը իր ուստումը ստացաւ Կեսարիայում և կ. Պօլտամ:  
Նա լաւ ուսումնասիրել էր յունաց, պարսից լեզուները.  
Հմուտ աստւածաբան էր և գիտակ հայկաբան: Միե-  
նոյն ժամանակ օրինակելի վարք ու բարք ունէր: Նա  
գեռ աշխարհական ժամանակ ամուսնացաւ և արու  
զաւակ չունեցաւ, որ կաթողիկոսական գահը ժառան-  
գէր: Նա միայն մի գուստը ունէր Սահականոյշ անու-  
նով, որին ամուսնացըց հայոց սպարապետ Համա-  
զասպ Մամիկոնեանի հետ, որպիսի ամուսնութիւնից  
ծնւեցան Վարդան, Հմայիակ և Համազասպ Մամիկոն-  
եանները (Վարդանանց պատերազմի հերոսները):

Սապուրակէս ահնչան կաթուզիկոսի մահից յիշտոյ, ամենքի ուշագրութիւնը կենցրոնացաւ ու. Սահակի վրա և հայ ազգի ու Պարսկական—Հայստանի թագաւոր Խոսրով Գրի հաւանութեամբ ու. Սահակը ընտրեց կաթուզիկոս (389—439):

Ս. Սահակը կաթուղիկոսական գահը բարձրացաւ շատ անյաջող ժամանակակ: Հայաստանը քաղաքական խիստ ազմկալի վիճակումն էր: Յոյներն ու պարսիկները, իւրաքանչիւրն իրենց կողմից, աշխատում էին Հայաստանին տէր դառնալ, ուստի աշխատում էին երկպառակութիւններ առաջցնել մեր թոյլ, անաջող թագաւորների և անհնապանդ նախարարների մէջ, որպէս զի ներքին խոռվութիւնների միջոցով իրենց նպատակին հասնեն:

Ս. Սահակը փորձեց վերջ տալ այդ ազգակործան երկպառակութիւններին, սակայն անյաջող, մինչև այն տեղը հասաւ, որ պարսիկները հեռացըին նըան կաթուղիկոսական աթոռուից:

Մեր նպատակից զուրս լինելով այդ ժամանակի քաղաքական պատմութիւնը անել, ուստի ի նկատի կունենանք Սահակի միայն կաթուղիկոսական զործունէութիւնը: Նա որպէս կաթուղիկոս մեծ ջանքեր զործ դրեց—լարեկարգից հկեղեցիները, նոր վանքեր, հկեղեցիներ շինեց, վերանորոգեց Հոկիփամէի տաճարը որպարսից Շապուհ թագաւորը քանդել էր տեղը: Բացի դրանից՝ իր հօտը այլպիսի անհաշտ թշնամիներից

աղատելու համար, նա Վաղարշապատում մի ժողով գումարեց և կանոններ հաստատեց, որ այդ կանոններով հայ հոգևորականները ղեկավարեն իրենց հօարք Գաւառների և զիւղերի համար տիսուչներ և առաջնորդներ կարգեց, քորհապիսկոպոս անունով:

Դիանց պարտականութիւնն էր ժողովրդին խրա-  
տել, մեղաւորներին և մոլորւածներին դարձի ըերել:

Ս. Սահակը ամենամեծ ծառայութիւն արեց նրանով, որ նա գործակից եղաւ Մհարոպին՝ տառեր գրտնելիս և վուամշապուհ ուսումնասէր թագաւորի հետհայ աշխարհը ուսումնաբանների ցանցով պատեց ու դրանցից աւարտած ընդունակ աշակերտներին արտասահման ուղարկից լիզուաբանութեան և զիտութիւնների մեջ կատարելագործելու, որոնք վերադարձան Հայաստան և իրենք ևս մի մի լուսատու ճրագներ դարձան:

Ս. Սահակի զնահատելի և անմոռաց գործերից  
մէկն է նաև Աստվածաշնչի թարգմանութիւնը:

Ա. Գլքի առաջին թարգմանութիւնը կատարւեցաւ ասորերէն բնագրից և Մհարովի և իր աշակերտների ձեռքով:

Այդ թարգմանութիւնը թերութիւններ ունէր, ուստի կարիք զգացւեց երկրորդ անգամ թարգմանել յունարէն «Եօթանասնից» թարգմանած օրինակից. ուստի ամենը աչքը դարձաւ դէպի Սահակը:

Նրա մօտ ժողովւեցան վառմշապուհը, նախարարներն ու հոգևորականները և թախանձագիրն խընդուցին Սահակին, որ իրքի յունարէն լիդու մէջ խիստ հմուտ, ձեռնարկէ այդ թարգմանութեանը: Ի միջին այլոց ժողովականները ասացին նրան. «Այդպիսի մհծործին Հայաստանում ոչ ոք չէ կարող ձեռնարկել»:

Ասհակը սիրով յանձն առաւ նրանց խնդիրը կատարել: Նա ամբողջ Աստւածաշունչը յունարէնից թարգմանեց հայերէն, անպատմելի դժւարութիւնների լադթելով:

Այդ թարգմանութիւնը կատարւած է այնքան  
յաջող, որ յետապայ սերունդները մինչև այսօր զար-  
մանումին նոր հարազատութեան վրա:

Օ Սատրներն անգամ, երբ կարիք է լինում համեմատելու Աստվածաշունչը, ինկատի են առնում հայերէնը, որովհետեւ այդ «Եօթանանից» կոչւած յունարէն օրինակը չկայ, կարծւում է, որ կորածէ: Մի խօսքով՝ Սահակի թարգմանած Աստվածաշունչը համարւում է թարգմանութիւնների մայրը:

Բացի ա. Գրքից, ա. Ասհակը թարգմանեց ա. Հայութի բառի բառից մեկնութիւններից շատեւը:

Ս. Սահակը միաւու խորին ծերովթեան մէջ 439  
թւի սկզբամբերի 7 ին, ուղիղ իր ծննդեան օրը, Բագ-  
րեանդ գաւառի Բլուր գիւղում, օ1 տարի կառավարե-  
լով կաթուղիկոսական աթոռը: Նա վախճանեց ամե-  
նախաղաղ մահով և աղօթելով: Երանելու վերջին  
խօսքն էր. «Տէ՛ր Յիսուս, ընդունիր իմ հոգին»:

Նա խփեց իր աչքերը աշակերտների և սիրելիների շրջանում, որոնց թւումն էր և նրա թռոն Վահան Մամիկոնեանի կինը՝ Դուստր:

Նրա մահւան լուրը տարածելուն պէս, Հայաստանի բոլոր գաւառներից մարդիկ ժողովւեցան, բազմաշխատ հովւապետի մարմինը մեծ հանդէսով տեղափոխեցին Տարօն գաւառի Աշտիշատ դիւզը, ուր եկեղեցու մէջ և թագեցին նրա աճիւնը:

Որովհետեւ Սահակը արու ժառանգ չունէր, ուստի  
իր հայրական կալածքները կտակեց իր սիրելի թոռ-  
ներին՝ Վարդանին և Նորա եղբայրներին ու այսպիսով  
հոչակաւոր Աշտիշատ զիւզը, որ Լուսաւորչի տաճ-

ժառանգական սեպհանկանութիւնն էր, անցաւ Մամիկոնիանների ձեռքը։ Ահա այս մեծ մարդու մասին է, որ զբում է մեր պատմաբան Խորենացին։ «Մահանացու ծնեալ՝ զիւրն անմահ յիշատակ եթող»։ (մահ-

կանացու ծնւեց, անմահ յիշատակ թողեց)։ Թող օրհնուի անմահի յիշատակը։

ԳԵՂՐԻԳ ՔԱՀ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ

1 հոկտ.



Օշական. Ա. Մեսրոպի գերեզմանը